# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**<< ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-38 >> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Ք. Երևան** **<<17>>.04.2026թ.**

**Ժամը 11:00**

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի պետ Կ. Աբազյան (հանձնաժողովի նախագահ),

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի համակարգման բաժնի ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության փոխգնդապետ Մ. Խուրշուդյան (գնահատող անդամ),

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության հրշեջ փրկարարական պատրաստության բաժնի պետ, փրկարար ծառայության փոխգնդապետ Գ. Սաֆարյան (գնահատող անդամ),

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **փրկարարական մեքենաների /CPV 34111200/1 /** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-38** ծածկագրով ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց՝

1. ***Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.***

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն եղել:

2. ***Տեղեկություններ գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ***

*ՀՀ ՆԳՆ կարիքների համար* փրկարարական մեքենաների *ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-38 ծածկագրով ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց՝ ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին /16.04.2026թ. ժամը 11:00/ կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել են «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն, «Արփախ» ՍՊԸ-ն, «ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն:*

3. ***Տվյալներ՝ ներկայացված հրավերի պահանջներին համապատասխանության մասին.***

*Վերոգրյալ մասնակիցների ներկայացրած հայտերը ծրագրի կողմից ճանաչվում են որպես վավեր և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը:*

4. **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-38 *ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ուսումնասիրման վերաբերյալ.***

*Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատման և ուսումնասիրման համար գնահատման նիստն ընդհատել և հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ ներքին գործերի նախարարություն (ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեում,), 403 սենյակ:*

**Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**ՆԱԽԱԳԱՀ՝**

ՀՀ ՆԳՆ ՏՎ ավտոտնտեսության բաժնի պետ Կ. Աբազյան

**ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

ՀՀ ՆԳՆ ՓԾ ՓՈՒՀ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ փոխգնդապետ Մ. Խուրշուդյան

ՀՀ ՆԳՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՓՊ բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Գ. Սաֆարյան

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյան